«Այբ» կրթական հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
2018թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք

ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
7 հունիսի 2019թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.*
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	316,523	299,038
Ավանդներ բանկերում		-	274,386
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	7	47,749	293,190
Պաշարներ	8	21,386	60,757
Ընթացիկ ակտիվներ		**385,658**	**927,371**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9	44,279	61,013
Հետաձգված հարկային ակտիվներ	17	16,411	21,833
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		1,177	1,319
Ոչ ընթացիկ ակտիվներ		**61,867**	**84,165**
Ընդամենը ակտիվներ		**447,525**	**1,011,536**
Պարտավորություններ և հիմնադրամի միջոցների մնացորդ			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	10	80,332	255,420
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	18,430	19,725
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	152,758	519,338
Կարճաժամկետ փոխառություններ	13	142,000	149,000
Ընթացիկ պարտավորություններ		**393,520**	**943,483**
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	25,587	42,607
Երկարաժամկետ փոխառություններ		5,240	5,240
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**30,827**	**47,847**
Ընդամենը պարտավորություններ		**424,347**	**991,330**
Կուտակված ավելցուկ		23,178	20,206
Հիմնադրամի միջոցների մնացորդ		**23,178**	**20,206**
Ընդամենը պարտավորություններ և հիմնադրամի միջոցների մնացորդ		**447,525**	**1,011,536**

* Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	Ծնթգ.	2018թ.	2017թ.*
Եկամուտ ուվիրատվություններից	14	1,289,578	1,960,701
Եկամուտ ծառայություններից		91,473	85,262
Այլ եկամուտ		11,386	4,372
		1,392,437	**2,050,335**
Ծրագրերի գծով ծախսեր	15	(1,289,891)	(1,971,928)
Ընդհանուր և վարչական ծախսեր	16	(101,408)	(83,881)
Գործառնական գործունեության արդյունքներ		**1,138**	**(5,474)**
Ֆինանսական եկամուտ		17,998	11,227
Ֆինանսական ծախսեր		(10,742)	(2,677)
Զուտ ֆինանսական եկամուտ		**7,256**	**8,550**
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**8,394**	**3,076**
Շահութահարկի գծով ծախս	17	(5,422)	(2,493)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**2,972**	**583**

* Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 5):

Ֆինանսական հաշվետվություններն հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. հունիսի 6-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սոնա Կոշեցյան
Գործադիր տնօրեն

Արմանուշ Սարգսյան
Գլխավոր հաշվապահի
ժամանակավոր պաշտոնակատար

հազ. դրամ	Կուտակված ավելցուկ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	19,623
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	583
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**20,206**
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ*	20,206
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	2,972
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**23,178**

* Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	2018թ.	2017թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	91,473	85,086
Ստացված շնորհներ և նվիրատվություններ*	904,568	1,557,649
Տրամադրված շնորհներ և նվիրատվություններ	(28,000)	(575,924)
Կանխիկ վճարումներ մատակարարներին	(655,059)	(462,156)
Կանխիկ վճարումներ աշխատակիցներին	(429,219)	(363,014)
Հարկերի վճարումներ՝ բացառությամբ շահութահարկի	(152,690)	(135,625)
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը	**(268,927)**	**106,016**
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(268,927)**	**106,016**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,497)	(5,893)
Բանկային ավանդների տեղաբաշխում	-	(145,547)
Մուտքեր բանկային ավանդներից	269,545	-
Տրված փոխառություններ	-	(4,870)
Մուտքեր տրված փոխառություններից	3,382	1,974
Ստացված տոկոսային եկամուտ	22,949	6,277
Ներդրումային գործունեության համար (օգտագործված)/ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր	**294,379**	**(148,059)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր փոխառություններից	-	149,000
Փոխառությունների մարում	(7,000)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր	**(7,000)**	**149,000**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**18,452**	**106,957**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	299,038	193,993
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(967)	(1,912)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (Ծնթգ. 6)	**316,523**	**299,038**

* Տեղեկատվությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 5):

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 40-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Հիմնադրամը և հիմնական գործունեությունը

«Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամը) հիմնադիրներն են՝

- Աշոտ Ասլանյան
- Դավիթ Փախչանյան
- Արամ Փախչանյան
- Կարո Սարգսյան
- Կարեն Մուսայելյան
- Դավիթ Յան
- Մաթևոս Արամյան
- «Օգտագոն» ՍՊԸ

Հիմնադրամի հիմնական նպատակն է ստեղծել բարձրորակ կրթական միջավայր Հայաստանում, աջակցել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը, աջակցել երիտասարդներին աշխատանքային առաջխաղացման և նրանց իրավունքների պաշտպանության գործում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Կորյունի փ. 19 ա, 9-րդ հարկ:

2 Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում գնահատումները վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթների կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 24-ի (զ) կետում՝ ծախսերի բաշխման հետ կապված:

5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը (կետ Ա) 2018թ. հունվարի 1-ից: 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել նաև մի քանի այլ նոր ստանդարտներ, սակայն այդ ստանդարտները էական ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հիմնադրամի կողմից ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ այս ֆինանսական հաշվետվություններում համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել նոր ստանդարտի պահանջներն արտացոլելու համար:

Ա. ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»*

ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական գործիքների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման և չափման պահանջները: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»* ստանդարտը:

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Հիմնադրամը կիրառել է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտի համապատասխան փոփոխությունները, որոնք պահանջում են առանձին տողով ներկայացնել ֆինանսական ակտիվների արժեզրկումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Բացի այդ, Հիմնադրամը կիրառել է ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ»* ստանդարտի համապատասխան փոփոխությունները, որոնք կիրառելի են 2018թ. տեղեկատվության բացահայտման համար, սակայն որպես կանոն չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել չբաշխված շահույթի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

(i) Ֆինանսական ակտիվների դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ստորև բերվող աղյուսակում և վերջինիս կից ծանոթագրություններում ներկայացված է չափման սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39-ի և նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9-ի Հիմնադրամի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր դասի համար 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

հազ. դրամ	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39	Վերադասա-կարգում	Վերաչափում	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 9
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Փոխառություն-ներ և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	299,038	-	-	299,038
Ստացվելիք շնորհներ	Փոխառություն-ներ և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	22,920	-	-	22,920
Տրված փոխառություններ	Փոխառություն-ներ և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	7,979	-	-	7,979
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			**329,937**	-	-	**329,937**

Շնորհները և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգվում էին որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, այժմ դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող: Հիմնադրամը մտադիր է պահել ակտիվները մինչև մարման ժամկետը պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու համար, և այդ դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում ֆինանսական պարտավորությունների վերադասակարգում կամ վերաչափում չի իրականացվել:

(ii) Ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների, սակայն ոչ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի է շուտ է ճանաչվում, քան պահանջվում է ՀՀՄՍ 39-ով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական:

Հիմնադրամի գնահատմամբ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնում արժեզրկման գծով լրացուցիչ պահուստի ճնշմանը:

(iii) Անցումը նոր ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տեղի ունեցած փոփոխությունները կիրառվել են հետընթաց, բացառությամբ ստորև ներկայացվածի.

- Հիմնադրամն օգտվել է նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը չվերահաշվարկելու հնարավորությունից դասակարգման և չափման (այդ թվում՝ արժեզրկման) պահանջների հետ կապված: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները ճանաչվում են չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ: Այդ իսկ պատճառով, 2017թ. համար ներկայացված տեղեկատվությունը որպես կանոն արտացոլում է ՀՀՄՍ 39-ի, այլ ոչ՝ ՖՀՄՍ 9-ի պահանջները:
- Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա կատարվել է հետևյալ գնահատումը՝ որոշվել է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում պահվում է ֆինանսական ակտիվը:

6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2018թ.	2017թ.
Հազ. դրամ		
Բանկային հաշիվների մնացորդներ	316,523	296,165
Կանխիկը ճանապարհին	-	2,873
Ընդամենը դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	**316,523**	**299,038**

Տոկոսադրույքի ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 18-ում:

7 Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր

	2018թ.	2017թ.
հազ. դրամ		
Ստացվելիք շնորհներ	4,839	22,920
Տրված փոխառություններ	4,597	7,979
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դասում ներառված դեբիտորական պարտքեր	**9,436**	**30,899**
Կանխավճարներ	18,338	244,933
Ընթացիկ հարկային ակտիվներ	15,551	15,551
Այլ	4,424	1,807
	47,749	**293,190**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի երկու պայմանագրային կողմ (2017թ-ին՝ մեկ պայմանագրային կողմ), որոնց մնացորդները գերազանցում են կանխավճարների և այլ դեբիտորական պարտքերի ընդհանուր գումարի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 11,939 հազար դրամ (2017թ-ին՝ 203,328 հազար դրամ):

Ստացվելիք շնորհների և տրված փոխառությունների հետ կապված պարտքային և արտարժութային ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

8 Պաշարներ

	2018թ.	2017թ.
հազ. դրամ		
Շինարարական նյութեր	18,635	58,045
Այլ	2,751	2,712
	21,386	**60,757**

9 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգիչներ և սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք և գրականություն	Վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	43,184	19,256	29,738	13,974	55,624	161,776
Ավելացումներ	2,836	-	2,037	-	2,210	7,083
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**46,020**	**19,256**	**31,775**	**13,974**	**57,834**	**168,859**
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	46,020	19,256	31,775	13,974	57,834	168,859
Ավելացումներ	974	-	172	-	550	1,696
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**46,994**	**19,256**	**31,947**	**13,974**	**58,384**	**170,555**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	21,601	3,888	9,830	2,772	50,030	88,121
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	7,204	1,925	6,817	2,840	939	19,725
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**28,805**	**5,813**	**16,647**	**5,612**	**50,969**	**107,846**
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	28,805	5,813	16,647	5,612	50,969	107,846
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	6,639	1925	5,939	2,782	1,145	18,430
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**35,444**	**7,738**	**22,586**	**8,394**	**52,114**	**126,276**
Հաշվեկշռային արժեք						
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	21,583	15,368	19,908	11,202	5,594	73,655
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,215	13,443	15,128	8,362	6,865	61,013
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,550**	**11,518**	**9,361**	**5,580**	**6,270**	**44,279**

10 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Առևտրական կերդիտորական պարտքեր	57,596	120,549
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	11,960	35,276
Ստացված կանխավճարներ	10,737	59,424
Պետական բյուջե վճարվելիք գումարներ	39	40,171
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	**80,332**	**255,420**

Կրեդիտորական պարտքերի հետ կապված արտարժութային և իրացվելիության ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	62,332	77,177
Տարվա ընթացքում ստացված	115	5,893
Փոխանցում եկամուտներին վերաբերող շնորհների կազմ	-	(1,013)
Նվիրատվություններից ստացված եկամուտի կազմում ճանաչված	(18,430)	(19,725)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	**44,017**	**62,332**

12 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	519,338	956,376
Տարվա ընթացքում ստացված	904,568	1,502,925
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներից	-	1,013
Նվիրատվություններից ստացված եկամուտի կազմում ճանաչված	(1,271,148)	(1,940,976)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	**152,758**	**519,338**

13 Կարճաժամկետ փոխառություններ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի կապակցված կողմից ստացված գրավով չապահովված մեկ փոխառություն 142,000 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2017թ-ին՝ 149,000 հազար դրամ): Փոխառությունը տոկոսակիր չէ և ենթակա է մարման ըստ պահանջի:

14 Եկամուտ նվիրատվություններից

հազ. դրամ	2018թ.	2017թ.
«Այբ» դպրոցի շինարարական աշխատանքների համար	223,863	801,197
Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացման համար՝ կառավարության կողմից ֆինանսավորվող	626,085	603,384
Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացման համար՝ այլ դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող	-	59,821
Այլ ծրագրերի իրականացման համար	439,630	496,299
	1,289,578	**1,960,701**

15 Ծրագրերի գծով ծախսեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Աշխատակազմի գծով ծախսեր	372,833	335,794
Կրթական և այլ նյութերի գծով ծախսեր	315,857	335,387
Տրված նվիրատվություններ	274,695	372,925
«Այբ» դպրոցի շենքի շինարարություն	223,863	801,197
Վարձակալության գծով ծախսեր	23,148	32,631
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	22,392	37,470
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	18,430	19,725
Գովազդի ծախսեր	10,967	7,789
Կոմունալ ծառայությունների և գրասենյակային ծախսեր	5,977	11,628
Այլ	21,729	17,382
	1,289,891	**1,971,928**

16 Ընդհանուր և վարչական ծախսեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Կրթական և այլ նյութերի գծով ծախսեր	38,995	35,723
Աշխատակազմի գծով ծախսեր	33,070	32,011
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	9,592	4,512
Վարձակալության գծով ծախսեր	9,916	4,032
Գովազդի ծախսեր	4,698	-
Կոմունալ ծառայությունների և գրասենյակային ծախսեր	2,560	3,724
Տրանսպորտի ծախսեր	1,785	1,075
Այլ ծախսեր	792	2,804
	101,408	**83,881**

17 Շահութահարկի գծով ծախս

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Հիմնադրամը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(5,422)	(2,493)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**(5,422)**	**(2,493)**

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնում

հազ. դրամ	2018թ.	%	2017թ.	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	8,394		3,076	
Շահութահարկը՝ հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	(1,679)	(20)	(615)	(20)
Չնվազեցվող ծախսեր	(3,743)	(45)	(1,878)	(61)
	(5,422)	**(65)**	**(2,493)**	**(81)**

(բ) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում:

հազ. դրամ	1 հունվարի 2018թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2018թ.
Ոչ նյութական ակտիվներ	9,674	-	9,674
Առևտրական դեբիտորական պարտքեր	(814)	974	160
Ակտիվներին վերաբերող շնորհներ	6,218	(2,012)	4,206
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	6,755	(4,384)	2,371
	21,833	**(5,422)**	**16,411**

հազ. դրամ	1 հունվարի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2017թ.
Ոչ նյութական ակտիվներ	9,674	-	9,674
Առևտրական դեբիտորական պարտքեր	176	(990)	(814)
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8,380	(2,162)	6,218
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	6,096	659	6,755
	24,326	**(2,493)**	**21,833**

18 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 18 (գ)),
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 18 (դ)),
- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 18 (ե)):

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին:

Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունենան հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ֆինանսական ակտիվները, որոնք կարող են ենթարկվել պարտքային ռիսկի, հիմնականում հանդիսանում են բանկային հաշիվների մնացորդները: Թեև տնտեսական պայմանները կարող են ազդեցություն ունենալ բանկային հաշիվների մնացորդների հավաքագրման վրա, ղեկավարությունը գտնում է, որ պայմանագրային կողմերը կկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները, այդ իսկ պատճառով, Հիմնադրամը ենթարկված չէ էական պարտքային ռիսկի: Բանկային հաշիվների մնացորդները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Հիմնադրամը չի ակնկալում, որ վերջիններս չեն կատարի իրենց պարտականությունները:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Հիմնադրամն ունի նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող սահմանափակ տվյալներ, ներքին հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված համադրելի տեղեկատվությունը: Ստորև ներակայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված համադրելի տեղեկատվությունն իրենից ներկայացնում է նշանակալի ելակետային տվյալներ սպասվող պարտքային վնասը գնահատելու համար, որն արտացոլում է նաև առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այդ ֆինանսական ակտիվների հետ կապված հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	2018թ.	2017թ.	Օգտագործված արտաքին չափորոշիչ տեղեկատվություն	
ԱԿՏԻՎՆԵՐ			**Պարտականությունների չկատարման հավանականությունը**	**Վնասը պարտականությունների չկատարման դեպքում**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	316,523	299,038	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	-
Ավանդներ բանկերում	-	274,386	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	-
Ստացվելիք շնորհներ	4,839	22,920	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody's» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն
Տրված փոխառություններ	4,597	7,979	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody's» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն
Ընդամենը ենթարկվածության առավելագույն չափը	**325,959**	**604,323**		

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ուներ 316,523 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 299,038 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Թեև բանկային հաշիվների մնացորդների հավաքագումը կարող է կախված լինել տնտեսական գործոններից, ղեկավարությունը գտնում է, որ պայմանագրային կողմերը կկատարեն իրենց պարտականությունները, քանի որ դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են իրենց ակտիվների չափով տասը խոշոր հայկական բանկերի շարքին դասվող բանկերում:

Հիմնադրամի գնահատմամբ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

Ստացվելիք շնորհներ

Ստացվելիք շնորհները վերագրելի են մեկ հաճախորդի հետ իրականացվող գործարքին: Մնացորդներն արժեզրկված կամ ժամկետանց չեն: Հիմնադրամի գնահատմամբ ստացվելիք շնորհները գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

Տրված փոխառություններ

Տրված փոխառությունների գծով սպասվող պարտքային վնասը գնահատելու համար Հիմնադրամը կիրառում է ստացվելիք շնորհների համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում: Հիմնադրամի քաղաքականության համաձայն՝ փոխառությունները տրամադրվում են կապակցված կողմերին:

Հիմնադրամը չի ակնկալում էական վնաս կապակցված կողմերին տրված փոխառությունների հետ կապված, քանի որ մնացորդները ենթակա են մարման ըստ պահանջի:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի հեղինակությունը վտանգելու:

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման մնացած ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Գումարները ներկայացված են համախառն հիմունքով և զեղչված չեն:

31 դեկտեմբերի 2018թ.		Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր					
հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	57,596	57,596	57,596	-	-	-	-
Ստացված փոխառություններ	147,240	147,240	142,000	-	5,240	-	-
	204,836	**204,836**	**199,529**	**-**	**5,240**	**-**	**-**

31 դեկտեմբերի 2017թ.		Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր					
հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	120,549	120,549	120,549	-	-	-	-
Ստացված փոխառություններ	154,240	154,240	149,000	-	5,240	-	-
	274,789	**274,789**	**269,549**	**-**	**5,240**	**-**	**-**

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ էականորեն տարբեր գումարների չափով:

(ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով արտարժույթները, որոնցով արտահայտված են ավանդները, շնորհները և այլ ստացվելիք գումարները և փոխառությունները, չեն համապատասխանում Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ենթարկվածությունն արտարժութային ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված 2018թ.	Ֆունտ ստերլինգով արտահայտված 2018թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2017թ.	Ֆունտ ստերլինգով արտահայտված 2017թ.
Ավանդներ բանկերում	-	-	129,436	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	303,421	178	162,518	656
Կանխավճարներ և այլ ստացվելիք գումարներ	12,264	-	38,381	210,369
Ստացված փոխառություններ	(3,513)	-	(3,513)	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(23)	(113)	(66)	(113)
	312,149	**65**	**326,756**	**210,912**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
1 ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ	483.03	482.63	483.75	484.1
1 ֆունտ ստերլինգ/ՀՀ դրամ	644.94	622.27	611.61	653.54

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	Արժևորում Շահույթ կամ վնաս	Արժեզրկում Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2018թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(31,215)	31,215
Ֆունտ ստերլինգ (10% շարժ)	(7)	7
31 դեկտեմբերի 2017թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(32,676)	32,676
Ֆունտ ստերլինգ (10% շարժ)	(21,091)	21,091

19 Կապիտալ պարտավորվածություններ

Հիմնադրամն ունի կառուցման պայմանագրերին վերաբերող 46,060 հազար դրամ գումարով (2017թ-ին՝ 200,139 հազար դրամ) կապիտալ ծախսումներ կատարելու պարտավորվածություն:

20 Կապիտալի կառավարում

Հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության բնույթը՝ այն չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Հիմնադրամի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

21 Պայմանական դեպքեր

Հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինները իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ հարկեր, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հաշվառման քաղաքականությունը կապված են այդ երկրների հարկային օրենսդրության հետ: Ընկերությունը կանխատեսում է, որ հետագա տարիներին հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ չեն լինի, որոնք էական ազդեցություն կունենան ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

22 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է, ստորև ներկայացված վարձատրություններ, որոնք ներառված է աշխատակազմի ծախսերի կազմում:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	98,516	84,048

(ii) Այլ գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	113	79,953	-	-

(iii) Գործարքներ Հոգաբարձուների խորհրդի և հիմնադիրների հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	63,607	139,250	285,375	285,375

(iv) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ (ստացված)	2,785	1,115	-	-
Տրամադրված շնորհներ	(435,622)	(1,062,058)	-	-
Ստացված փոխառություններ	-	149,000	142,000	149,000
Չեղքերված ապրանքներ և ծառայություններ	(31,984)	(35,583)	2,200	-

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ: Հաշվետու կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր՝ կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

Այլ կապակցված կողմերն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի հետ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները և Հիմնադրամի կողմից հիմնադրված այլ հիմնադրամները:

23 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

24 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Հիմնադրամի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(b) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Հիմնադրամը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող ստացվելիք նվիրատվությունների սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ – 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես նշված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում. 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն

Հիմնադրամը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների մարման ժամկետների համապատասխանեցմանը համապատասխան պարտավորությունների մարման ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:

- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:

- ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում է որպես վաճառք այս նպատակի համար, և Հիմնադրամը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ. 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Հիմնադրամը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,

- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային դրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Հիմնադրամի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի զեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Հիմնադրամն իր ֆինանսական ակտիվները դասում էր փոխառությունների և առևտրական դեբիտորական պարտքերի դասին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս. նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Փոխառությունները և առևտրական դեբիտորական պարտքերը չափվում էին ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Հիմնադրամը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Հիմնադրամը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Հիմնադրամը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Հիմնադրամը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական

ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Հիմնադրամն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Հիմնադրամը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(գ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն

Ֆինանսական գործիքներ և պայմանագրային ակտիվներ

Հիմնադրամը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Ստացվելիք նվիրատվությունների գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և

հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Հիմնադրամի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմնադրամը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Հիմնադրամը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Հիմնադրամը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Հիմնադրամը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 90 օր ուշացումը,
- Հիմնադրամին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որը Հիմնադրամն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Հիմնադրամը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Հիմնադրամն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Հիմնադրամը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Հիմնադրամի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, որոնք չէին դասվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող դասին, գնահատվում էին յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում էր հետևյալը.

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Հիմնադրամին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որը Հիմնադրամն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում էին ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման մասին:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	Հիմնադրամն այս ակտիվները դիտարկում էր արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում էին արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվների արժեզրկման առանձին վկայություն չէր հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն առանձին չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չէին, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով: Հավաքական գնահատումն իրականացվում էր խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով փոխառությունները և դեբիտորական պարտքերը:
	Հավաքական արժեզրկումը գնահատելիս Հիմնադրամը դիտարկում էր մարումների ժամկետների և կրած վնասի գումարի վերաբերյալ նախորդ ժամանակաշրջանների տվյալները և կատարում էր դատողություն, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ էին տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:
	Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում էր որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում էր շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Հիմնադրամը գտնում էր, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս էին գրվում: Եթե արժեզրկումից կորստի գումարը հետագայում նվազում էր, և այդ նվազումը կարելի էր անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորստի գումարը հակադարձվում էր շահույթի կամ վնասի միջոցով:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում էր յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա էր որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա էր, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում էր, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում էր վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում էր որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում էին՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում էր ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում էին շահույթում կամ վնասում: Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում էին յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, արդյոք առկա էր որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չուներ կամ նվազել էր: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը

որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում էր միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ղ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե տվյալ բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած բաղկացուցիչների օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Հիմնական միջոցների բոլոր միավորների մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր բաղկացուցչի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների էական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

• համակարգիչներ և սարքավորումներ	5-10 տարի
• փոխադրամիջոցներ	5-10 տարի
• տնտեսական գույք	3-5 տարի
• վարձակալված հիմնական միջոցների բարելավում	1-10 տարի
• ոչ նյութական ակտիվներ	5 տարի
• այլ ակտիվներ	1-10 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից ցվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(զ) Շնորհներ և եկամուտ ներդրումներից

Եկամուտներին և ակտիվներին վերաբերող շնորհների սկզբնական ճանաչումն իրականացվում է իրական արժեքով, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ շնորհը կստացվի և Հիմնադրամը բավարարելու է շնորհի հետ կապված պայմանները: Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Եկամուտներին վերաբերող շնորհները, որոնք փոխհատուցում են Հիմնադրամի կրած ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ներդրումներից ստացվող եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջաններում, երբ ծախսերը ճանաչվում են:

(է) Ծախսեր

Շնորհների տրամադրմանը վերաբերող ծրագրային ծախսերը ճանաչվում են Հիմնադրամի և շնորհը ստացող կողմի միջև շնորհի նամակը ստորագրելու ժամանակ: Եթե շնորհները տրամադրվում են որոշակի պայմաններով, շնորհի գծով ծախսերը գրանցվում են այն պահին, երբ շնորհը ստացող կողմը կատարում է պահանջները կամ երբ քիչ հավանական է դառնում շնորհը ստացող կողմի կողմից պայմանները չբավարարելու հնարավորությունը:

Այլ ծրագրային ծախսերը և շնորհներին չվերաբերող ծախսերը ճանաչվում են հաշվեգրման հիմունքով՝ ապրանքները ստանալու կամ ծառայությունները մատուցելու պահին:

Ծրագրերի գծով ծախսերին և վարչական ծախսերին վերաբերող ծախսերի բաշխումն իրականացվում է ելնելով համապատասխան ծախսի բնույթից և հաշվի առնելով ծախսած ժամանակի ղեկավարության լավագույն գնահատականը և ծրագրին առնչվող և չառնչվող գործունեության գծով կրած համապատասխան ծախսերը:

Ղեկավարության գնահատմամբ ծախսած ժամանակը և ծրագրին առնչվող և չառնչվող գործունեության գծով կրած համապատասխան ծախսերը միջինում կազմում են վարչական ծախսերի համաատասխանաբար 92% և 8% (2017թ-ին՝ 91% և 9%):

(ը) Վարձակալություն

(i) Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում

Համաձայնության սկզբում Հիմնադրամը որոշում է, թե արդյոք այն հանդիսանում է վարձակալություն կամ պարունակում է վարձակալություն: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի օգտագործումից և արդյոք համաձայնությունը փոխանցում է ակտիվի օգտագործման իրավունքը:

Համաձայնության սկզբին կամ համաձայնության գնահատման վերանայման պահին Հիմնադրամը տարանջատում է համաձայնությամբ պահանջվող վճարները և այլ հատուցումները վարձակալության և այլ տարրերից՝ դրանց հարաբերական իրական արժեքների հիման վրա: Եթե Հիմնադրամը եզրակացնում է, որ ֆինանսական վարձակալության դեպքում վճարների հուսալի տարանջատումը գործնականում անհնար է, ակտիվը և պարտավորությունը ճանաչվում են վարձակալության առարկայի հիմքում ընկած ակտիվի իրական արժեքին հավասար արժեքով: Հետևաբար, պարտավորությունը նվազեցվում է վճարումների կատարմանը զուգընթաց, և պարտավորության գծով հաշվարկվող ենթադրվող ֆինանսական ծախսը ճանաչվում է՝ կիրառելով Հիմնադրամի փոխառության հավելյալ տոկոսադրույքը:

(ii) Վարձավճարներ

Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվեն են որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալություն գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես ընդհանուր վարձակալության ծախսի բաղկացուցիչ մաս՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

25 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Երկու նոր ստանդարտներ գործում են 2018թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է դրանց ժամանակից շուտ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հիմնադրամը ժամանակից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներից ակնկալվում է, որ ՖՀՄՍ 16-ը կարող է էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակ:

(ա) ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»*

Հիմնադրամից պահանջվում է կիրառել ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»* ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից: Հիմնադրամի գնահատմամբ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը կունենա ստորև ներկայացվող ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 16-ի կիրառման փաստացի ազդեցությունը կարող է փոփոխվել, քանի որ նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կարող է փոխվել այնքան ժամանակ, մինչև որ Հիմնադրամը չներկայացնի սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող իր ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»*, ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ մեկնաբանություն 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ մեկնաբանություն 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»* սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

(i) Վարձակալություն, որի շրջանակներում Հիմնադրամը հանդես է գալիս որպես վարձակալ

Հիմնադրամը կճանաչի նոր ակտիվներ և պարտավորություններ գործառնական վարձակալության հետ կապված: Այս վարձակալությանը վերաբերող ծախսերի բնույթը չի փոխվի, քանի որ Հիմնադրամը կճանաչի մաշվածության ծախս օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով և տոկոսային ծախս՝ վարձակալության պարտավորությունների գծով:

Նախկինում գործառնական վարձակալության գծով ծախսը Հիմնադրամը ճանաչում էր գծային մեթոդով վարձակալության գործողության ժամկետի ընթացքում և ճանաչում էր ակտիվներ և պարտավորություններ միայն այնքանով, որքանով գոյություն ուներ ժամանակային տարբերություն փաստացի վարձավճարների և ճանաչված ծախսերի միջև:

Հիմք ընդունելով ներկայումս հասանելի տեղեկատվությունը՝ Հիմնադրամը գտնում է, որ կճանաչի լրացուցիչ պարտավորություններ վարձակալության գծով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ վարչական գրասենյակի վարձակալության հետ կապված:

(ii) Անցումը ստանդարտին

Հիմնադրամը մտադիր է սկսել ՖՀՄՍ 16-ի կիրառումը 2019թ. հունվարի 1-ից՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի կիրառման կումուլյատիվ ազդեցությունը կճանաչվի որպես չբաշխված շահույթի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տարեսկզբի մնացորդի ճշգրտում՝ առանց համադրելի տեղեկատվության վերահաշվարկի:

Ստանդարտին անցնելիս Հիմնադրամը մտադիր է օգտվել վարձակալության սահմանմանը վերաբերող գործնական բնույթի պարզեցումից: Սա նշանակում է, որ ՖՀՄՍ 16-ը կկիրառվի նախքան 2019թ. հունվարի 1-ը կնքված և ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 համաձայն որպես վարձակալություն նույնականացված բոլոր պայմանագրերի նկատմամբ:

(բ) Այլ ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»*
- *Վաղաժամկետ մարման պայման բացասական հատուցմամբ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)*
- *Երկարաժամկետ մասնակցություններ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում (ՀՀՄՍ 28-ի փոփոխություններ)*
- *Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ՀՀՄՍ 19-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ-ների տարեկան կատարելագործումներ, 2015-2017թթ. ժամանակաշրջան – տարբեր ստանդարտներ*
- *Կոնցեպտուալ հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում*
- *ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր*